ՄԵՐ ԲՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

Անսահման է մեր հայրենի բնության գեղեցկությունը:



Ոսկեպարի վերին սահանքներում

Ինչպես ասում են՝ աստված տվել ու չի խնայել: Բայց, ափսոս, որ առօրյա հոգսե-

ռով տարված՝ չենք էլ նկատում այն հրաշալիքները, որ սփռված են մեր շուրջը:

Եվ փառք աստծո,որ մեր շուրջը դեռևս կան նման հազվադեպ անկյուններ, որոնցից մի քանիսը հենց մեր Հայրենի եզերքի մասնիկներն են…

Երբեմն դժվարանում ես հավատալ, որ մեր շուրջը դեռևս կան բնության նման անարատ, կուսական անկյուններ: Հատկապես մեր օրերում, երբ մարդը հասցրել է իր գործունեությամբ խախտել,փչացնել բնության ամեն մի անկյուն…



Հրաշք չէ՞ սա…

Արդ ինչպե՞ս չհիանաս մեր հայենի բնության այս հրաշքներով, ինչպես չզարմանաս Ոսկեպարի այս փոքրիկ հովտում այսքան գողտրիկ տեսարաններ տեսնելով և ինչպե՞ս չափսոսաս, որ այս ամենը մենք ժամանակ էլ չենք ունենում տեսնելու…

Կյա՞նքն է այդպիսին, թե՞ մենք ենք հեռացել Մայր բնությունից: Դժվար է ասել

Հ.Ալավերդյան